

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мелкъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխանատու ոյժ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Իշխան Իլիա ձախձախէ և հայերը.
Նամակ Բագրից. Նամակ Սիմֆերոպոլից. Նա-
մակ Սոֆիաից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւր-
քիայից: Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւ-
ղական հարցերից:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՌՅԺ

Մի առանձին հետաքրքրութեամբ մենք
ճանօթացանք իտալացի գիտնական Սիգե-
լէի նոր հետազոտութեան հետ, որ վերա-
բերում է մարդկային հասարակութեան
զարգացման Սիգելէ, ընկերով այն տար-
բերութիւնը, որ զոյգութիւն ունի ամբող-
ջ և հասարակութեան մէջ, նշա-
նաւոր տեղ է տալիս գրականութեան և
յատկապէս պարբերական մամուլին:
Ընդարձակ մտքով հասարակութիւն, «պուր-
լիկան», սկսեց կազմել, Սիգելէի կարծիքով,
այն օրից, երբ ծնվեց և հաստատվեց
պարբերական մամուլը, երբ կարելի եղաւ
մարդկանց կապել միմեանց հետ ընդհա-
նուր զաղափարներով և կարողութիւն
տալ նրանց անդադար մտքի փոխանակու-
թիւն կատարել: Հայեացքների շփման,
մտքի փոխանակութեան շնորհիւ սկսվեցին
կազմակերպվել համամիտների խմբեր, զա-
ղափարական կուսակցութիւններ և պատ-
րաստվեց հող այն մեծ ոյժի համար, որ
կրում է հասարակական կարծիք ա-
նուրը:

Մարդկանց ամեն տեսակ համախմբում-
ները դեռ հասարակութիւն չեն կազմում:
Նրբոր մարդիկ միայն ֆիզիքապէս
միմեանց մօտ են հաւաքվել, երբ, օրինակ,
ժողովում, հրապարակում, վաճառա-
նոցում խմբվել են միասին, նրանք կազ-
մում են ամբողջ և միայն այն ժամա-
նակ, երբ նրանք միմեանց հետ ունեն բա-
րոյական, մտաւոր կապեր և տոգորված
են որոշ զաղափարներով, նրանք կազմում
են հասարակութիւն: Իսկ այդ զա-
ղափարական կապի գլխավոր նպատակը
մամուլն է, որ այնքան մեծ դեր է կա-
տարում ներկայ զաղափարներ մարդկու-

թեան կեանքի մէջ և ազդում է նրա
պատմական առաջնադասութեան վրա:
Կոչված լինելով այդպիսի մի մեծ գործի,
մամուլը իր գեր կատարելու համար կարիք
ունի հասարակութեան մէջ զոյգութիւն
ունեցող հայեացքների և տրամադրու-
թիւնների ճշգրիտ և բարեխիղճ արտա-
յայտութեան: Հրապարակախօսներ և գր-
ողներ, ասպարէզ գալով իրանց գրելով,
միայն այն ժամանակ ունեն տեղական և
հեղինակաւոր նշանակութիւն, երբ նրանք
կարողացել են ըմբռնել և ուսումնասիրել
հասարակութեան մէջ տիրող ոգին և
հայեացքները և իրանց գրութեանը կամ
հրապարակութեանը իրեն մարդկութիւն, կամ
ընդունել են իրեն մարդկութեան երե-
ւոյթ: Հեղինակները, թէ իբրեւ անկախ
մտածող անձնավորութիւններ, թէ իբրեւ
եղած հայեացքների գեղեցիկ արտայայ-
տողներ, դառնում են բարոյական սիւներ,
որոնց շուրջը ժողովրդում են առանձին
կուսակցութիւններ և ամբողջ հասարա-
կութիւնը, դառնում են գիտակցական խե-
լացի մարմիններ, որոնք ճակատագրական
ոյժով դատապարտում են և թաղում
անյայտութեան ովկիանոսի մէջ ամբողջ
կրքերի արտայայտութիւնը և շարժում-
ները:

Ում համար թանգ է հասարակութեան
կանօնաւոր զարգացումը, նրա համար
թանգ պէտք է լինի և այն մեծ և ուժեղ
գործիքի վիճակը, որ նպաստում է այդ
զարգացման: Մամուլի մարդկութիւնը, ազն-
ւութիւնը, հաւատարմութիւնը և լը-
ջութիւնը անհրաժեշտ պայմաններն են,
որպէս զի հասարակական կարծիքը ժա-
մանակաւոր մարդկութիւնների մէջ չընկնի
և այդպիսով չը դանդաղեցնի հասարա-
կութեան զարգացման գործը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Որքան թոյններ կան հասարակութեան մէջ,
սարսափելի թոյններ, որոնք աւերում, ոչնչաց-
նում են, բայց սարսափ չեն տարածում: Այլ-
օրի մոլութեան մասոված մարդը չէ զգում թէ
ամեն օր, ամեն ժամ ինչ աւերիչ թոյն է մըտ-
նում, որ տղիտութիւնը մեծ պակասութիւն և

է միայն հողը հերկելու և տուրք վճարելու, որ
նրա ցանկութիւնները լոկ անասնական են,
նրան ժառանգելի չեն հողու ազնիւ ձգտումները
և մտքի վեժն զաղափարները, նա սասմանա-
փակ է իր ցանկութիւնների և պահանջների
մէջ: Մի խօսքով, գիւղացին մի այնպիսի արա-
բած է, որ երբեք չը պիտի ցանկանայ ձեռք
բերել կեանքի այն բարիքները, որոնցով ամե-
նայն իրաւամբ օգտվում է ժողովրդի միւս դա-
սակաւորը, որ կոչված է գործել զաղափար-
թիւնների ընդարձակ ասպարէզում: Այսինքն
զաղափարներ: Սակայն իրականութիւնը ցոյց
է տալիս, որ բարձր ցանկութիւնները ու ձգտու-
մները յատուկ են նոյնպէս բնութեան հարազատ
զաւակին—գիւղացուն. նրա սիրտը լինի և շատ
և շատ ինքնավար, որոնք նրան դեռ երազ են
թւում, որովհետեւ անկարելի է իրականացնել
նրանց: Բայց հարկաւոր է մի փոքր զարկ, որ-
պէս զի նման կրքերը զարթնեն և որոնք ելը
գէպի լոյս աշխարհ:

Այդպիսի ձգտումների շարքին է պատկանում
և ուսում ստանալու տենչանքը, որ օրէցօր դառ-
նում է աւելի և աւելի զգալի մեր ժողովրդի
գիւղական խաւերում: Չը նայած, որ հայ գիւ-
ղացին դեռ շատ հեռու է տնտեսական բարո-
րութիւններից և աղանդութիւններից, այնու ամենայ-
նիւ այժմ ամեն մի հայ իր առաջնակարգ
հոգին է համարում տալ իր որդուն միջոցներին
համապատասխան կրթութիւն:

Ուսման և գիտութեան նշանակութիւնը և
օգուտը այժմ ամեն մի կասկածանքից դուրս է
գիւղացու աչքի առաջ. նա շատ լաւ է հասկա-

նում իր օրգանիզմի մէջ. չէ զգում, որովհետեւ
սովորել է, որովհետեւ թունաւորումը մարդու
համար մի առանձին հանցք է կազմում, օտա-
րոտի, անհասկանալի հանցք: Այդպէս է անհա-
տը, այդպէս է և անհաստների հաւաքական բաղ-
մութիւնը—հասարակութիւնը: Այդ թոյններից մի
բանիս մասին անցեալներում խօսեց մի ուս-
կին, Մ. Վօլկովա, իր դասասուցութեան մէջ,
որ նուիրված էր այն հարցին, թէ ինչ դեր է
կատարում տղամարդը կնոջ առողջութիւնը
պահպանելու մէջ: Հետաքրքրական նիւթ: Եթէ
տղամարդը սեփականել է անդրանկութեան պա-
տիւն, իւրացրել է տիրապետելու իրաւունքը և
կնոջ յատկացրել է զուարճալի իրի պաշտօն, նա
գոնէ պարտաւոր է պահպանել իր ստրկահո-
ւառողջութիւնը, և դրա համար նրանից չեն պա-
հանջում, որ նա որ և է նոր միջնավայր ստեղ-
ծել իր կնոջ համար, բարեխաւ նրա դուրսիւնը:
Ոչ, պահանջում են, որ նա լինի այնպէս ինչպէս
բնական է, ինչպէս պահանջում է բարոյակա-
նութիւնը, մարդկայնութիւնը: «С. Петербург.
Вѣд.» լրագիրը այսպէս է հաղորդում Մ. Վօլ-
կովայի դասասուցութեան բովանդակութիւնը:

Ամենից առաջ նա յարձակվեց այն բանի
դէմ, որ տղամարդիկ, մինչև ամուսնանալը,
ձախկող սէր են վայելում: Գաւառիսօսը ասաց,
որ անհրաժեշտ է արական միջնակարգ զըպ-
րոցների բարձր դասարաններում մտցնել կըր-
թական դրոյցներ, որոնց մէջ բժշկները բա-
ցատրելին աշակերտներին, թէ որպիսի պար-
տիքի հետեւանքներ է ունենում գնած սէրը:
Մ. Վօլկովա յարձակվեց և միւս հասարակա-
կան խոցի դէմ, որ կորուստ է պատճառում
Ֆրանսիայի և արդէն մտնում է Ռուսաս-
տան, դա այն է, որ արեւմտական միջոցներ
են ձեռք առնում, որպէս զի կնոյն երկխոյս չը
ծնէ: Գաւառիսօսը ցոյց տուեց թէ որքան վնաս-
ակար հետեւանքներ են առաջանում այդ բա-
նից նա և առաջ պետութեան համար, ապա
և մասնաւորապէս ամուսնների համար: Ի
վերջոյ դասասուցը յայտնեց իր հիմնական
միտքը. որովհետեւ, երկու, դեռ շատ ժամանակ
կանցնի, մինչև որ տղամարդիկ կը ցանկանան
պատշաճաւոր դեր խաղալ կնոյն առողջութիւնը
պահպանելու մէջ, ուստի անհրաժեշտ է, որ
նրանք անդադար հող տանին իրանց առող-
ջացնելու մասին, ուսումնասիրեն առողջա-
պահութիւնը և վարեն առողջապահութեան
համապատասխան կեանքը:

Մեծ պահանջ չեն ներկայացնում ձեռք Ա-
ռողջացրէք ձեռք, որպէս զի ձեռք կինը, ձեռք ըն-
տանիքն էլ առողջ լինեն: Թիմար սովորութիւն-
ներին մի հետեւէք, ինչպէս որդեմոլութեան դէմ

նում, որ տղիտութիւնը մեծ պակասութիւն և
մինչև անգամ արմատական չարիք է սեփական
չանքի տեսակետից: Եւ զարմանալի չէ, երբ,
օրինակ, մի գիւղում, ուր մօտ տարւոյ տարի ա-
ռաջ պետական դպրոցներում սովորողներ թիւը
հազիւ երկու-երեք էր հասնում, այժմ նոյն գիւ-
ղում այդպիսիների թիւը անկարելի է մատնե-
րով համարել: Տիրացունների գերիշխանութիւնը
տղեւ մասսայի վրա արագ-արագ անցնում է,
իսկ հնութեան փոխելով ծածկված ժամագիրքը,
որ գիւղացու, մտաւոր պահանջի առաջինը և
վերջինն է, տեղ է տալիս ժամանակակից ողով
զբված օգտաւէտ գրքերի և առօրեայ հարցերով
զբաղված մամուլին (իբրեւ պերճախօս ապա-
ցոյց վերջին կարծիքի, կարելի է մատնացոյց
անել «Մշակ»-ում նորերս հաղորդած լուրերի
վրա՝ գիւղական հասարակութեան որոշումը լը-
րագիր ստանալու մասին):

Ասում են, որ Ֆրանսիացին այն աստիճան
լրագրամով է, որ նրա բիւջետի առաջին տեղին
է բռնում լրագրի բաժանորդագրիւնը. չենք սխալ-
վի, եթէ ասենք, որ հայ գիւղացին էլ այժմ
ուսման կարիքը աւելի է զգում, քան իր օրվայ
հայի հայթայթելը:

Խօսել այն մասին, թէ որքան օգտակար է
գիտութիւնը գիւղական ժողովրդի համար—աւե-
րորդ է. այս պարզ զաղափարը այժմ ընդհանուր
սեփականութիւնն է դարձել, բայց այն եղակի
խաւարամիտներից, որոնք չեն դադարում առանց
կարմրելու պնդել, իբր գիւղացուն բաւական է
ստորին ուսումը, իսկ բարձրագոյնը աւելորդ և
վտանգաւոր է:

գործադրած արեւմտական միջոցները: Այդ զգու-
նի սովորութիւնը մեր մէջ էլ է մտել և առայժմ
բարձր դասակարգների սիրած շէկերից, մէկն է,
չիկ, որ յաճախ գերեզման է տանում իր անմիտ
ստրկներին: Ոչինչ առաջադիմութիւն չէ կա-
րող լինել, եթէ նա հիմնված չը լինի մարդկա-
յին բնութեան վրա, աղբիւր չունենայ մարդը,
առողջ, նորմալ մարդը...

Բագուն տառապում է մշտական ծարաւից:
Գուր հակառակ էր թէ ինչ է նշանակում մի
անաղին բաղադր, որ խմելու ջուր չունի: Մեր
թղթակիցը արդէն յիշատակել էր այդ անտանե-
րի պակասութիւնը: Թիֆլիսը իր Կուր գետից
ջուր չէ վերցնում և ջրանցք է չինել՝ աղբիւրի
ջուր գործածելու համար. բայց միջոցների բա-
ղադր անքան զրկված ու խեղճ է, որ Կուրի
ջուրն անգամ մի երկնային պարզ և կը համարել,
եթէ գոնէ նա մատչելի լինէր «Kaeonik» լրագիրը
ասում է, որ երկաթուղին խոտացել էր Կուրից
ջուր բերել վազօններով, բայց չը կատարեց այդ
խոտումը և այժմ բազուցները հարկադրված
են ջուր բերել գիւղէք որոնքից... Աստղախառնից,
Վօլկայի բերանից: Լցնում են նաւերը, օրերով
ճանապարհ են դալիս և Վօլկայի ջուրը Բագ-
ուն խառնում են ծովի զաղցրացրած ջրի հետ
ու այդպէս գործ ածում: Եւ սակայն Բագուն ու-
կու հանք է... Ուկու պարկերը կարող են ի-
րանց համար ջուր բերել տալ նոյն իսկ նեւեր
գետից: Իսկ այն տանեակ հազարաւոր մար-
դիկ, որոնք ուկու պարկ չեն ներկայացնում, այլ
օրվայ հաց են աշխատում դառն աշխատան-
քով... Արժէ նրանց մասին մտածել:

ԻՇԽԱՆ ԻԼԻԱ ՃԱՎԱՅԱՎՈՋԵ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Այս վերջինի, Էմինի, Երեւանի անունները
կարելի էր և չը տայ: Մենք տեսանք թէ որքան
չնչին «ոմեր» է ծանրացած նրանց վրա: Մթթե-
րանատեղծ իշխանը չէր կարող գոնէ արհա-
մարհական ժպտով նայել ձորերի ու ձորերի գող-
ցողներին վրա: Ոչ, չէր կարող: Նա երեւոյն է
ապացուցանել, որ հայերը մի ամբողջ գունդ են
առաջ քաշել՝ վրացիներին ոչնչացնելու համար:
Պէտք է թուել այդ գունդը: Սենիօվսկին առա-
ջին համարն է, ափսոս միայն որ հայ չէ: Այդ-
պիսի երեւելի գիւտ անողը համար ներքին է
ձեռքից փախցնել երեք հայ անուններ, մինչև ան-
գամ եթէ այդ երեքը ամենամեծ յանցանքը ձո-

Այո, դաւառը այժմ այնպիսի անմիտմար
դութեան մէջ է, որ միայն հիմնական գիտու-
թեամբ զինված և բարեխիղճ անձինք կարող են
դուրս բերել նրան տղիտութեան և տնտեսական
բայցաման որոքների վիճակից. դաւառին հար-
կաւոր է բանխմաց և եռանդուն բժիշկ, որ հող
տանէ ժողովրդի առողջութեան վրա և նուա-
զեցնէ մեռնողների տոկոսը, հարկաւոր է տն-
տեսագէտ, որ ծանօթացնէ ժողովրդին երկրա-
գործութեան և արդիւնաբերութեան նոր ձևերի
ու գործիքների հետ. հարկաւոր է իրաւագէտ,
որ հասկացնէ գիւղացուն օրէնքների իմաստը և
պաշտպանէ նրա դատը: Մի խօսքով՝ ամեն մի
մասնագիտութիւն, որ ունի մի որ և է կապ
գիւղացու տնտեսական և մտաւոր կարիքների
հետ, բարեբար դեր կարող է կատարել աշխա-
տանքի ծանրութեան տակ հեծող գիւղացու
կեանքի մէջ, մի կողմից բարձրացնելով նրա
մտաւոր և բարոյական մակերևոյթը, միւս կողմից
նպաստելով նիւթական բարօրութեանը:

Իսկ սրա համար հարկաւոր է, որ գիւղական
չըլանի միջին դուրս եկող ամեն մի երիտա-
սարդ ջնքմ սէր տաճէ դէպի իր ժողովրդը և
զինված գիտութիւնով վերադառնալով դաւառի
մոլ անկիւնները ու նուրբ իր համայն ու-
ժերը ծանր, բայց ազնիւ գործին—ժողովրդի
լուսաւորութեան և զաղափարութեան վեհ
զաղափարին: Անկեղծ սէրը և եռանդը ամեն
գիտաւորութիւն յաղթում է:

Մ. Մ.—Մ.

1) հան-
րեանի
գտնվում
8000 ր.
Սիմֆեր-
ոպոլիս
51 1/3 0/0-ի
մուրհամար
կանի ձ
դրամ 1
թեանը
Տարվ
խաղա-
համաձա-
յանձնա-
մասն ք
խաղա-
բայ, թ
միւսմայ
յանձնա-
դրեանի
րեանի
ժողովը
դամներ
թեանի
հաշիւն
դտաւ,
կարծեց
բովորե-
տաւեց
կազմա-
համարե-
հոգաբա-
ժառայ
վեց:
Հողա-
խկապե-
վականի
այդպիս-
Ներկայ
ընդհան-
վայելու-
Հողա-
մուտք
բ 60 1/2
առ. 1-ն
բ. պա-
ձեռն)
մուտք
հանդու-
20 կ.,
առ. 1-
65 1/2 կ.

Վեր-
մի ներ-
քայլի
կանն օգ-
րին ժ.
դային
կենդի-
վողովը
Վ. Ներկ-
Պ. Վ. Ն
էր: Նրա-
հանկա-
որում թի-
մօյըլը
դուարձ-
արժանա-
Ըրելը դ-
րանց կե-
նեանն, օ
Մնացա-
շողովը
թատեր-
հայրեր-
Տէր-Ստե-
սիկայա-
Ներկա-
դայի լի-
թեմաք յ
խտերի
կայաթ-
կաններ
խնձողը կ
բաղմա-
ներկայա-
մուտք
են: Գրե-
մասին մ.

1) հանգուցեալ Սերովբէ Գաբրիէլեան Միսի-
րեանի կտակով նուիրած անշարժ կայքը, որ
գտնվում է տեղիս երկրորդ թաղամասում, 2)
8000 ր. պահեստի գումար (4000 ր. տրված է
Սիմֆերոպոլի փոխադարձ վարկի ընկերու-
թեանը 3 տարուց աւելի ժամանակամիջոցով
51/2%-ով, իսկ 4000-ը գտնվում է պարտա-
ժողովարարութեանը անկողնի տեղիս մասնաւոր ժող-
կանց ձեռքում ցական 8%-ով, 3) առձեռն
գում 1314 ր. 651/2 Կ., վերջինից ընկերու-
թեանը պահեստի տրված ընթացիկ հաշուով:

Տարվայ հաշիւը կարգացվելուց յետոյ, պ. նա-
խագահն առաջարկեց ժողովականներին ընտրել,
համաձայն կանոնադրութեան, վերաստուգիչ
խանութատիրոջ 5 անդամ, հաշիւները մանրա-
մասն ընկելու և հաստատելու համար: Պ. նա-
խագահը հարց դրեց՝ ընտրութիւնը կատարել
բաց, թէ՛ գաղտնի՝ քուէարկութեամբ: Ժողովը
միաձայն բաց քուէարկութեամբ վերաստուգիչ
խանութատիրոջ անդամներ ընտրեց՝ պ. պ. Գ. Դո-
ղոսեանին, Յ. Սեմերճեանին, Ա. Սպենդի-
րեանին, Մ. Գաբրիէլեանին և Պ. Գաբրիէլեանին:
Ժողովը ընդմիջեց, և այնուհետև ընտրված ան-
դամներն անցան երկուսից մասեանի ընտու-
թեան: Յանձնաժողովը, ընկելով մասեանները,
հաշիւները միանգամայն ճիշդ և կանոնաւոր
գտաւ, դրամն էլ լրիւ պարտատու, ուստի և
կազմեց այդ մասին պարտուպատճառ արձանագ-
րութիւն: Ընդհանուր ժողովը՝ վերաստուգիչ խան-
ութատիրոջ արձանագրութեան հիման վրա՝ հաս-
տատեց իր ստորագրութեամբ հաղորդագրութեան
կազմած տարեկան հաշիւը և բարոյական պարտը
համարեց խորին շնորհակալութիւն յայտնելու
հոգաբարձութեանը՝ նրա անխնայ և բարեխիղճ
ծառայութեան համար: Ժամը 8-ին ժողովը փակ-
վեց:

Հոգաբարձութեան կազմած միամսյա հաշիւը
իսկապէս մի օրինակելի հաշիւ էր: Բոլոր ժողո-
վականները բերանից այն էր լսում: Թէ մի
այդպիսի հաշիւ առաջին անգամն են տեսնում:
Ներկայ հոգաբարձութեան անդամները թաղային
ընդհանուր այդ հասարակութեան յարգանքն են
վայելում:

Հոգաբարձութիւնը 1898 թ. ընթացքում
մուտք ունեցել է այլ և այլ աղբիւրներից 10,793
ր. 601/2 Կ., ծախս՝ 1708 ր. 73 Կ., մնացորդ
առ 1-ին յունվարի 1899 թ. (այդ հաշուով 8000
ր. պահեստի գումար և 1084 ր. 871/2 Կ. առ-
ձեռն) 9084 ր. 871/2 Կ., գերեզմանատանից
մուտք՝ 2962 ր. 95 Կ., ծախս՝ 2941 ր. 92 Կ.,
հանգուցեալ Միսիրեանի տանից մուտք՝ 337 ր.
20 Կ., ծախս՝ 128 ր. 45 Կ.: Ուրեմն ընդամենը
առ 1-ին յունվարի 1899 թ. մնում է 9314 ր.
651/2 Կ. (8000 ր. պահեստի գումար):

ՆԱՍԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Մարտի 29-ին

Վերջապէս մեր թատերասէրները աջողակ
մի ներկայացում: Երէկ, մարտի 28-ին, քաղա-
քային ակումբի դահլիճում, յօգուտ Վերջապա-
կան օգնութիւն թիւրքալուսմ վնասված հայե-
րին ժողովածուի տուեցին ներկայացում: Խա-
ղացին «Փանդաճ օջախ» կոմիտէի Ստեփո-
կանցի, Վ. Ե. Ե. Ե. մօղիբլութիւն և «Միսիսի»
փողովները: Ներկայացումը, չնորհիւ բէժիսոր
Վ. Նիկողոսիանի, ընդհանրապէս գոհացուցիչ էր:
Պ. Վ. Նիկողոսիան իր բոլոր դերերում գեղեցիկ
էր: Նրա խաղը մտածված է և թողնում է հան-
դիսական փրա փորձված թատերասէրի տալա-
նորութիւն: Շնորհալի թատերասէրը Ե. Ե. Ե. ըր
մօղիբլութեան մէջ, Կարապետի դերում, մեծ
զուարճութիւն պատճառեց հանդիսականներին:
Արժանացաւ նրանց բուռն ծափահարութեան:
Ուրիշ դերակատարներից աչքը էին ընկնում ի-
րանց կենդանի խաղով տիկին Ա. Տէր-Ստեփա-
նեան, օր. Ա. Գոնճեան և պ. Ի. Շահմիրզեան:
Մնացածները նպաստեցին ընդհանուր խաղի ա-
ջողութեան: Մեր կարծիքով, օր. Ն. Գոնճեան լաւ
թատերասէր կարող է լինել, եթէ նա վարժվի
հայերէնի մէջ: Ներկայացման ժամանակ օր. Ս.
Տէր-Ստեփանեան արտասանեց գեղեցիկ կերպով
«Աղբաւոր բաժինը» ոտանավորը:

Ներկայացման բարձր նպատակի պատճառով
դահլիճը ծայրէ ծայր լի էր: Իրանց ներկայու-
թեամբ յարգել էին ներկայացումը ուսու և վրաց
ինտելիգենցիան: Իսկ իրանց փառաւոր քաջա-
կայութեամբ աչքը էին ընկնում մեր վաճառա-
կանները: Զարմանալի են այդ մարդիկ: Նրք որ
ինձնոյց կամ հարսանիք է լինում, նրանք միշտ
բազմած են լինում սեզանի առաջ, բայց նրք որ
ներկայացում է լինում, որից նրանք կարող են
մտաւոր պաշար ստանալ, նրանք միշտ խորշում
են: Գոնճեան Տէր թշուառ քաղաքի և եղբայրների
մասին մտածեցէ... Բայց ինչ մտածել, ինչ

բան: Թէկուզ ամբողջ աշխարհը քարոքանդ լի-
նի, միայն թէ մեր վաճառականները ողջ ու
առողջ լինեն ու նրանց առևտուրը աշող գնայ:

Ներկայացումից դուրս արգիւնք կը մնայ 100
րուբլուց աւել: Եթէ դահլիճի փողովները չը
խանդարէր, այդ գումարը կը հասնէր մինչև
200 րուբլու: Բացի սրանից բոլոր Մ. Մովսի-
սեան, որ ներկայացման նախաձեռնողն էր, ու-
ղարկել է Պետերբուրգում ու Բաղուս ապրող
սղնակեցիներին ժող 50 ր. տոմսակներ, և յոյս
կայ, որ այդ տեղերից ուղարկեն տոմսակներ
փողերի հետ մինչև 100 րուբլի: Շնորհակալու-
թեան արժանի են բոլոր դերակատարները, իսկ
առանձնապէս բոլոր Մ. Մովսիսեան, որ ոչ մի
շանք չը ինայեց ներկայացման նիւթականի
պողովութեան համար: Ներկայացումից յետոյ
յարգելի բոլոր թատերասէրներին պատեց
ընթերցում: Մեր թատերասէրները Զատիկից յե-
տոյ մտադիր են խաղալ «Արշակ Ներկորդ», յո-
գուտ տեղիս Լիւսիօնեան տարրական դպրոցի
չբաւոր սաների:

Նորերս տեղիս գործակալ Արշակ Զահանայ
Տէր-Ստեփանեան ստացել է Թիֆլիսի կոնսու-
լարից իր հրահանգը, որ շուտով գումար է ս. Կա-
րապետ և ս. Գեորգ եկեղեցու ծխականներին՝
երեցփոխների ընտրութիւնների համար: Նրեց-
փոխների ընտրութիւնը պէտք է կայանայ եկող
կիրակի, ապրիլի 4-ին: Ս. Կարապետ եկեղեցու
համար ուղում են ընտրել երեցփոխ՝ բոլոր Մ.
Մովսիսեանին, որ միակ յարմար անձնատու-
թիւն է այստեղի եկեղեցու գործերը բարեկե-
լի: Համար: Ինչպէս լսում ենք, բոլոր Մովսի-
սեան համաձայնվում է ընդունել այդ պաշտօնը,
եթէ ծխականները կը պահանջեն նախկին երեց-
փոխից հաշիւները: Տեղացի

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Կ. Պոլիս, մարտի 5-ին

Կը ցաւիմ, որ ձեր ներկայ տարվայ 17 թիւ
թերթը ու ձեր համարն ու ձեր պատասխանե-
րու հարկին մէջ կը գտնվիմ:

1899 յունվար 29 թ. Կապուսի հրատարակեալ
«Մշակ» 17-րդ թ. մէջ գարնանը կարգաւոր
վերստին մի նամակ, որ կը ձգնէր ինձ դէմ յա-
րուցեալ ամբաստանութիւնը իր իրողութիւն
ցոյց տալու:

Եթէ պարոն նամակագիրը չի բաւականա-
ժողովարար պատրաստել, վարչական խնամա-
կալութիւնով, պատրաստեալների և հիւանդանո-
ցի անկողնակալ պաշտօններում իր առած
լոկ թշնամական մէջ սխալ լրբող ուղղել, ես
պատրաստ եմ իր մէջ զրպարտիչ աղբիւրին
դէմ՝ տաւոր օրինաւոր աղբիւրներ ցոյց տալ
պաշտպանելու: Համար իմ արդար իրաւունքս և
բացարձակ անկողնութիւնս: Անկողնը երեխային
ձնողայ թաղի հայ և յոյն դրացիներն ալ վը-
կայութեան բերելու պատրաստ եմ. դեռ տղե-
կին հայրն ու մայրն—Յարութիւն և Վերգին—
կենդանի վկաներ կապրին Գաղը-Չէշմէ կոչված
թաղը:

Պատու նուիրական է ինձ համար, որոյ հետ
անբաժան կը կենակցի անողորմ դատաւորս,
խիղճս, որ հանդարտ է և անխնայ:

Ահա այս է իմ վերջապէս պատասխանս.
անկողնակալ ընթերցող թող այժմ դատէ:

Տօք. Կ. Մովսիսեան

ՆԵՐԿԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, հինգշաբթի, ապրիլի 1-ին, երեկոյեան
ժամը 8-ին, քաղաքային գումարի դահլիճում կայա-
ցաւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերու-
թեան մեծահարգելի արտակարգ ընդհանուր ժողովը,
մասնակցութեամբ 40 անդամներ: Նախագահում
էր բժշկագետ Բ. Նաւասարդեան: Ինչպէս յայտնի
է, այդ արտակարգ ժողովը գումարվել էր Թիֆ-
լիսի պ. նահանգապետի առաջարկութեամբ՝
ընկելու այն նոր կանոնադրութեան ծրագրի,
որ սեակել է ընկերութեան համար Կովկասի պ.
կառավարչապետի, ներքին գործերի պ. մինիստ-
րի համաձայնութեամբ: Այդ ծրագրի էական կէ-
տերը յայտնի են մեր ընթերցողներին: Ընդհա-
նուր ժողովը, ընկելով ծրագրի՝ որոշեց միաձայն
ընդունել պ. կառավարչապետի կազմած նոր
կանոնադրութեան ծրագիրը: Մանրամասնու-
թիւնները կը հաղորդենք յաջորդ անգամ: Ժո-
ղովը վերջացաւ գեղեցիկ ժամը 11-ին:

Կովկասեան կառավարչապետի դիւանատան
փոխ-դիրեկտոր Ի. Սահմաքան Կանչ-
ված է Պետերբուրգ: «Кавказ» լրագրի ասելով,
Սանդրիլայոյ ճանապարհ: Կենդանի ակտիվ մարդ
բան ենթադրութիւն կար առաջ, այն է առաջի-
կայ կիրակի օր, ապրիլի 4-ին:

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են,

որ ուսուցիչ դեպատնութիւնը յանձնեց Բ. Դրանը
մի յայտագիր, որով նրա ուշադրութիւնն է
դարձնում այն թիւրք աւաղակների վրա, որոնք
մտնում են ուսուցիչ սահմաններ և կողոպտում
են տեղական գիւղերը: Երկրորդ անասունները և
հրդեհելով խրճիթները: Յայտագրի մէջ ասված
է, որ եթէ Բ. Դրանը հող չի տանի միջոցներ
ձեռք առնելու բռնութիւնները վերջ դնելու հա-
մար, Ռուսաստանը ստիպված կը լինի ինքը հող
տանել այդ բանի մասին:

Թիֆլիսի առաջին օրիորդական գիմնազիա-
յում, այս տարվայ մարտ ամսի 13-ից սկսած,
լինում են մանկավարժական ժողովներ: Այդ ժո-
ղովներին՝ ուսուցչական խմբի հետ միասին՝
մասնակցութեամբ VIII և IX դասարանի աշակեր-
տները: Վիճաբանութիւնները լինում են
դասադրերի, թանաջանների և ծնողական պար-
տաւորութիւնների մասին, և աշակերտներին
յայտնում են իրանց կարծիքները: Այդպիսի ժո-
ղովներ, աշակերտութիւնների մասնակցութեամբ,
Թիֆլիսում առաջին անգամն է, որ տեղի են ու-
նենում:

Հրաւիրում ենք հասարակութեան ուշադրու-
թիւնը այն բազմաթիւ չբաւարարող վրա, որոնք
կարծող լինելով նիւթական օժանդակութեան և
միջոցաւորութեան՝ մանաւանդ նպաստի կարիք ու-
նեն առաջիկայ տներին: Այդ նպատակով ու-
ղարկված գումարները կը հասցնենք կամ բարե-
գործական ընկերութիւններին կամ կը բաժա-
նենք աղքատների մէջ: Այդ գումարին կը միաց-
նենք և Ս. Տէր-Սարգսեանցից ստացած հինգ
րուբլի, որ նա յանձնել է խմբագրութեանը՝ չբա-
ւարարող համար:

Պետերբուրգի «Русск. Вѣд.» լրագրին հեռա-
գրում են, որ հայ հասարակութեան լաւ ծանօթ,
Պետերբուրգի համալսարանի հայոց լեզուի պրո-
ֆեսոր Ն. Մարք առաջիկայ գարնանը կը պաշտ-
պանէ դիսերտացիա՝ մագիստրոսի աստիճան
ստանալու համար:

Տնայնագործութիւնը զարգացնելու նպատա-
կով, միշտ ուսանելի ծրագիր է մշակվել Մոսկ-
վայի նահանգում: Այդ ծրագրով դիտաւորու-
թիւն կայ նահանգի գաւազան կէտերում բնակ
տնայնագործական դպրոցներ և աղբիւրով տա-
րածել արհեստներ գիւղերում: Առաջին դպրոցը
որոշված է բանալ Մոսկվայի գաւառում՝ հիւս-
նութիւն սովորեցնելու, իսկ երկրորդը՝ Բոգո-
բուրսկի գաւառում՝ բրուտարութիւն սովորեցնելու:

Լրագրիները ներկայացուցիչներ, տպարաննե-
րի, վիճաբանների և ուրիշ տպագրական հաս-
տատութիւնների գործողներ վաղուց ցանկու-
թիւն ունեն մի ընկերակցական կազմակերպու-
թիւն ստեղծել: Այդ հարցը ընկնել տպագրա-
կան գործի առաջին համառուական ժողովում.
իսկ այժմ արդէն հաստատված է տպագրական
գործողների ընկերութեան կանոնադրութիւնը և
ընկերութեան անդամ են դարձել 20 հիմնադր-
ներ և 40 իսկական անդամ մայրաքաղաքի լրա-
գրիների տպարանների և ուրիշ հաստատութիւն-
ների կողմից:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՎԻՑ մեզ գրում են հետեւեա-
լը: «Այսօր, ցերեկվայ ժամը 5-ին, երկաթուղու
առանձին գնացքով Ալեքսանդրոպոլ ժամանեց
ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը: Երեք
օր առաջ Վեհափառ գալստեան լուրը ստանա-
լով, քաղաքային դռման արտակարգ ժողովի
հրաւիրվեց ընդունելութեան հանդիսաւոր պատ-
րաստութիւնները համար: Պատգամաւորներ ըն-
տրվեցին Վեհափառ ընդհանր գնալու և բա-
րի գալուստ յայտնելու համար պ. պ. Յար. Բար-
սամեան և Աւստոս Խաչակեան, որոնք հե-
տեւալ օրը և եթ ճանապարհ ընկան դէպի Լա-
րաբլիւս: Ընդհանր գնաց նաեւ տեղիս յայտը-
ղը՝ Միսիթար վարդապետ Տէր-Մկրտչեան: Ցե-
րեկվայ ժամը 12-ից սկսած երկաթուղու կայա-
րանի մօտ սկսվեց հաւաքվել մի անաղին բազ-
մութիւն, որ դնալով աւելի ու աւելի մեծացաւ,
մինչև Վեհափառ ժամանելու բօլէւ: Հաւաք-
ված բազմութեան մէջ կային Ալեքսանդրոպոլ-
ում ապրող բոլոր ազգերից, զանազան պաշտո-
նակաւոր անձինք իրանց ընտանիքներով, քա-
ղաքապետը, ուղարկվող անդամները և ին-
տելիգենցիայի մի մեծ բազմութիւն: Գնացքը
կանգ առնելիս քաղաքապետը աղ ու հաց
մատուցեց Վեհափառ Կաթողիկոսին: Վազո-
նից դուրս գալով, Վեհափառ նստեց ծած-
կած կառք և բաղմամբ ձիաւորներ, կառքերի
և ուղեկիցների հետ մտաւ քաղաք, առկից ու-
նենալով հայրապետական խաչն ու գաւառանը:
Քաղաքում ժողովուրդը լուռ և կարգապահ էր:

Վեհափառ կառքը կանգ առաւ ս. Աստուածա-
ծին եկեղեցու մօտ, որտեղ նա կառքից իջնելով
մտաւ եկեղեցի, աղօթեց և գնաց փառաւոր
կերպով դարդարված յաջորդարանը: Ընդունելու-
թիւնների ու պատրաստութիւնների համար
ընտրված անձինք պ. պ. Յովհաննէս Յակոբեան,
Ա. Գրիգորեան, Յ. Մատինեան, Պ. Դրամբեան
և Ն. Սէլյանեան ոչ մի ջանք չէին ինայեղ ար-
ժանի ընդունելութեան պատրաստութիւնների
համար: Վեհափառ այստեղ կը մնայ երեք կամ
չորս օր, որտեղից Արարանի ճանապարհով
կուղևորվի Էջմիածին: Նրան ուղեկցում են գա-
ւազանակիր Գորիւն վարդապետը, Գիւստ Զահա-
նայ Աղանեան և մի քանի աշխարհական անձ-
նաւորութիւններ:

ԴՍՍՈՎԻՑ մեզ գրում են. «Մարտի 27-ին,
երեկոյեան 10 ժ. 50 րոպէին, Բոստօլից մար-
դատար գնացքը դուրս գալով, 24 վերստ հեռա-
ւորութեան վրա, Ակոյա կայարանի մօտ գծից
դուրս թռաւ: Եղբակաւ ընկաւ լճի մէջ, որը
առաջացել էր Գոնի հեղեղումից: Մի երկու վա-
զոններ շուռ եկան հէնց գծի կողքին. ասում են
մահվան դէպքեր չը կան, բայց այն, որ մեքե-
նավարը և նրա օգնականը ծանր վէրքեր են
ստացել: Այս կողմերը գարնանային եղանակներ
են անում և անձրևներ են տեղում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՍԱԿ ԹԻՒՔԻՍԻՑ

Տրապիզոն, մարտի 26-ին

Տեղիս ֆրանսիական ֆրէշներու որբանոց հիմնե-
լու մտադրութիւնը արգելքի հանդիպեցաւ: Ահա
է ինչպէս Ֆրէշները վերջերս կառավարութեան
ներկայացուցին ընկերութեան ծրագրի մը, որու
նպատակն էր մի որբանոց հիմնել իրենց դպրո-
ցի մէջ: Այդ ծրագրի բոլոր յօդուածները կը
վերաբերին անդամակցութեան և դանձման. որ-
բանոցի ներքին կազմակերպութեան համար ո-
չինչ ըսված չէ, միայն մէկ յօդուած կայ, թէ
ընդունվող որբ պէտք է ամեն կերպ հնա-
զան դ վի որբանոցի կարգերուն: Նա-
խի խտրելի մէջ խնդիր եղաւ, վաղիս բոլոր իր
խորհրդականներով սինչ չը գտան առարկելու
և հարկադրված պիտի ընդունէին, մանաւանդ
որ հիմնադրութեան ցանկին մէջ կար տեղիս
ֆրանսիական հիւպատոսը և պատուր անդամ
նշանակված էր Պոլսի ֆրանսիական դեսպանը,
երբ յունաց առաջնորդը առարկելով թէ՛ բանի
որ ֆրէշները 6 տարեկան տղաներ պիտի ըն-
դունեն և որովհետև ընդունելութիւնը առանց
դաւանանքի խտրութեան պիտի լինի և ընդուն-
վող որբը դպրոցի ամեն կարգերուն պիտի հնա-
զանդի, հետևապէս կաթօրիկ պիտի ըլլայ, բո-
ղոքեց այդ հիմնադրութեան դէմ, վերջացնելով
թէ՛ 6 տարեկան երեխայ մը անհափաճա լինե-
լով չէ կարող կրօնափոխ լինել և այլն: Մեր ա-
ռաջնորդական տեղապահն ալ սիրտ ըրաւ ձաջ-
նակցելու անոր, աւելացնելով թէ՛ վերջին առն-
տեսական տագնապի բերմամբ իմ ազգիս մէջն
է, որ ամենէ աւելի կը գտնուին որբեր, որով
իմ որբերս են, որ կրօնափոխ պիտի լինին:
Վաղիս երկնքն կը սպաւեց այդպիսի օգնու-
թիւն, իսկոյն խնդիրը կը վերջացնէ, յայտարա-
րելով թէ՛ բանի որ երկու ազգերու առաջնորդ-
ներ այդ տեսակ արգելքներ կը թուեն, մեր ի-
րաւունքէ բարձր է հաստատել այդ ընկերու-
թեան ծրագիրը, տեղեկագրենք Պոլիս և այնտեղ
թող որոշման մը յանգին:

Տեղացի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բանաւորական կուսակցութեան պատգամա-
ւորներ Ֆուրիէր և Բրէտոն գրաւոր կերպով
յայտնեցին զինուորական մինիստր Ֆրէյսիէին,
որ պարլամենտական նստաշրջանը վերսկսվե-
լուն պէս, նրանք հարցապնդում կանեն պատ-
գամաւորների ժողովին Գրէֆուսի գործին վե-
րաբերեալ վերջին մերկացումների առիթով:
Բրէտոն դիտաւորութիւն ունի հարցապնդում
անել Ֆրէյսիէին թէ՛ փխիստը ինչ միջոց-
ներ է մտածում ձեռք առնել զինուորական վար-
չութեան այն յայտնի անձանց դէմ, որոնց խաչ-
տառակ մեքենայութիւնները մերկացված են
այժմ ժամուշի մէջ:

Մարտի 24-ին (ապրիլի 5-ին) Հռոմում,
Կապիտոլի մէջ սովորական հանդիսաւորու-
թեամբ տեղի ունեցաւ մամուլի վեցերորդ մի-
ջազային կոնգրէսի բացումը թագաւորի թա-
գուստ, նշապօլիտանեան իշխանի և իշխանու-
հու, մինիստր-նախագահ Պէլլուի, մնացած մի-
նիստրների և իշխանութիւնների ներկայութեամբ:
Հռոմի քաղաքապետը, իշխան Բուսսոլի, մի
ճառ արտասանեց, որով ողջունեց կոնգրէսի
անդամներին:

